

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ
ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱ-
ՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար- նախարար
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ռ. Թովիջյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ա. Խաչատուրյան	ՀԱՄՀ-ի գործադիր տնօրեն
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսա- րանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Հ. Գրիգորյան	«Այ Փի Էս Սի» ընկերության տնօրեն, սոցիոլոգ, ԵՊՀ-ի դասախոս
Ս. Կարախանյան	Երևանի գեղարվեստի ակադեմիայի պրոռեկտոր
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վար- չության պետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Ն. Գալստյան	ՀՀ վարչապետի օգնական

1. Հավատարմագրման հանձնաժողովի վերջնական կազմի հաստատում

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հավատարմագրման հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

1) ԵՊՀ, ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար, ամբիոնի վարիչ Սամվել Շուքուրյան.

2) ՀՀ ԳԱԱ-ի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար, ԵՊՀ-ի դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ Աշոտ Սաղյան.

3) ՀՊՃՀ-ի ամբիոնի վարիչ Յուրի Սարգսյան.

4) ՀԱԱՀ-ի Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյան.

5) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոֆեսոր Սամվել Ավետիսյան.

6) Հայաստանի ամերիկյան համալսարանի հավատարմագրման կենտրոնի ղեկավար Շարիստան Մելքոնյան.

7) Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Հայկ Քոթանջյան.

8) ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետի ասիստենտ Նելլի Հովհաննիսյան.

9) Բոլոնիայի քարտուղարության ներկայացուցիչ, Երևանի պետական մանկավարժական համալսարանի ասպիրանտ Սահականույշ Սարգսյան.

10) Երևանի գեղարվեստի ակադեմիայի պրոռեկտոր Սուսաննա Կարախանյան:

2. Պետական հավատարմագրման կարգի փոփոխությունների և լրացումների նախագծի քննարկում և հաստատում

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ. Թովչյանին ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի առաջարկությունների հիման վրա խմբագրել

Պետական հավատարմագրման կարգի փոփոխությունների և լրացումների նախագծի 1-ին կետի «բ», «գ», «դ» և «ե» ենթակետերը՝ դրանք համապատասխանեցնելով ՀՀ օրենսդրությանը և Բոլոնյան գործընթացի հիմնադրույթներին (քննարկել նաև նոստրիֆիկացիայի կիրառման հարցը՝ առաջնորդվելով գերմանական և ֆրանսիական մոդելներով)։

2) հաստատել Պետական հավատարմագրման կարգի փոփոխությունների և լրացումների նախագծի վերջնական խմբագրված տարբերակը։

3) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանին՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի հետ համատեղ ներկայացնել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, ըստ որի 2016 թվականի հունվարի 1-ից՝ ինստիտուցիոնալ, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից՝ նաև ծրագրային հավատարմագրում չունեցող բուհերը չեն ստանալու պետական պատվեր և դրա շրջանակում հատկացվող ֆինանսավորում։

4) ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ քննարկել «պետական նմուշի դիպլոմ» հասկացությունը կիրառությունից հանելու և Բոլոնյան գործընթացի պահանջներին համապատասխանեցնելու հարցը և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին։

3. Հիմնադրամի կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագծի քննարկում և հաստատում

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ. Թովչյանին ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի առաջարկության հիման վրա խմբագրել Հիմնադրամի կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագծի 1-ին կետի «ի» ենթակետը՝ հանելով «8.2 ստորագրում է հավատարմագրման վկայականը և ներդիրը.» ձևակերպումը։

2) հաստատել Հիմնադրամի կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագծի վերջնական խմբագրված տարբերակը։

4. Հիմնադրամի ինքնավերլուծության քննարկում և հաստատում

(Ռ. Թովչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Հիմնադրամի ինքնավերլուծության զեկույցի ներկայացված տարբերակը.

2) հանձնարարել ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ. Թովչյանին՝ խմբագրել Հիմնադրամի ինքնավերլուծության զեկույցը և խմբագրված հայերեն և անգլերեն տարբերակները էլեկտրոնային եղանակով շրջանառել Հոգաբարձուների խորհրդի անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ